ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

3 հուլիսի 2020թ. թիվ 497-Ա

ԿՅԱՆՔԻ ԴԺՎԱՐԻՆ ԻՐԱՎԻՃԱԿՈՒՄ ՀԱՅՏՆՎԱԾ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԵՎ ԽՆԱՄԱՏԱՐ ԾՆՈՂ ԴԱՌՆԱԼ ՑԱՆԿԱՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՀԱՄԱԴՐՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԲԱԶՄԱՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԽՈՒՄԲ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 9-Ի ԹԻՎ 515 ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով և «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2019թ. հունիսի 13-ի N 751-Ն որոշման 1-ին կետով հաստատված «Խնամատար ծնող դառնալու ցանկություն ունեցող անձանց ընտրության, հաշվառման, երեխայի խնամքը և դաստիարակությունը խնամատար ընտանիքում կազմակերպելու կարգի» 17-րդ և 18-րդ կետերը՝

Ո ր ո շ ո ւ մ եմ.

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի տարածքում խնամատարություն կազմակերպելու նպատակով կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների և խնամատար ծնող դառնալ ցանկացող անձանց տվյալների համադրում իրականացնելու համար ստեղծել բազմամասնագիտական խումբ՝ համաձայն հավելվածի:

2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի 2019թ. հոկտեմբերի 9-ի «Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների և խնամատար ծնող դառնալ ցանկացող անձանց տվյալների համադրում իրականացնող բազմամասնագիտական խումբ ստեղծելու մասին» թիվ 515 կարգադրությունը:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Invalid signature

X

ԱՆԴՐԵՅ ՂՈՒԿԱՍՅԱՆ

Ա.ՂՈՒԿԱՍՅԱՆ

2020թ. հուլիսի 3
ք.Վանաձոր

Հավելված.
ՀՀ Լոռու մարզպետի
2020թ. հուլիսի 3-ի
թիվ 497-Ա որոշման

Կ Ա Զ Մ

Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների և
խնամատար ծնող դառնալ ցանկացող անձանց տվյալների
համադրում իրականացնող բազմամասնագիտական խմբի

Սարգիս Գրիգորյան - խմբի ղեկավար, մարզպետարանի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի պետ

Խմբի անդամներ.

Սվետլանա Ասրյան - մարզպետարանի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի ավագ մասնագետ

Գայանե Բոջուկյան - մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության սոցիալական ապահովության բաժնի ավագ մասնագետ

Արմեն Ավետյան - Վանաձորի սոցիալական աջակցության տարածքային բաժնի պետ /համաձայնությամբ/

Մարգարիտա Շահվերդյան - «Առավոտ» ԲՀԿ-ի նախագահ /համաձայնությամբ/

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

07/03/20

X

ԱՐԹՈՒՐ ՄԽԻԹԱՐՅԱՆ

Ա.ՄԽԻԹԱՐՅԱՆ